ՏԽՈՒՐ ՎԷՊ

ԱԼԷՔՍԱՆԴՐ ԱՐԾԻԵԱՆԻ

I

Անմեղ հրեշտակ նա աշխարհ եկաւ —
Երկնատուր մի զարդ երկրին պարգևած,
Ցոյս, սէր ու հաւատ նա իւր հետ, բերաւ,
Կուսական սրտի խորքերում պահուած:
Եւ լի հաւատով, ոսկեվառ յուսով
Մտերիմ ընկեր ընտրեց նա մէկին,
Նա սիրեց նորան անխարդախ սիրով,
Նուիրեց նորան իւր սիրտն սուրբ հոգին...

II

Բայց, աւաղ, խղճուկ, պարզամիտ մանկան...
Երկար չը ժպտաց նա այս աշխարհում...
Սիրուած «մտերիմ ընկերը» նորան
Պատրաստեց դառը, թունաւոր անկում...
Եւ անկաւ մանուկն անմե՛ղ, անարատ,
Վշտամաշ սրտով, փշրուած յոյսերով...
Թոշնեց նա, որպէս հրաշալի մի վարդ՝
Պոկուած, տրորուած կոպիտ մատներով...

Մոսկվա. 22 յունիսի 1890 թ.